ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՖ ՈՒ ԷՄԻՐ ԱԼ ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ողբերգական այն ժամանակներից, որը հայտնի է «Հայոց ցեղասպանություն» ընդհանուր անվամբ, մեզ բաժանում է գրեթե 90 տարի: Հայոց ցեղասպանության հարցը քննարկվել է տարբեր տեսանկյուններից: Համաշխարհային առաջադիմական միտքը լույս է սփռել երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրերի մութ ծալքերի վրա, սակայն դեռևս շատ հարցեր մնում են չպարզաբանված, շատ փաստաթղթեր՝ չբացահայտված: Հայտնի է, որ երիտթուրքական կառավարության «Հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով լուծելու»[1] ծրագրի իրականացման արդյունքում հայ ժողովրդի արևմտյան հատվածը հայտնվեց սիրիական անապատներում: Բռնագաղթի ենթարկված հայությունն առաջինը շփվեց արաբ ժողովրդի հետ: Եվ մինչ քրիստոնյա Եվրոպան և ԱՄՆ-ն, լավատեղյակ լինելով Հայոց ցեղասպանությանը, ըստ ամենայնի չձեռնարկեցին քայլեր այն կանխելու, արաբ ժողովուրդը հյուրընկալեց ու ապաստան տվեց հայ տարագիրներին, այլապես՝ ջարդերից փրկվածները կզրկվեին վերապրելու հնարավորությունից: Հայ-արաբական բարեկամությանը նպաստեց այն հանգամանքը, որ երկու ժողովուրդներն էլ գիտակցում էին, որ իրենք նույն ճակատագրի բախտակիցներ են: Արաբ պատմաբան Սալեհ Զահր ադ Դինն այդ կապակցությամբ գրում է. «Հայերն ու արաբները նույն դատի, նույն տառապանքի, նույն ճակատագրի զավակներն են: Զարմանալի թող չթվա, որ նրանք եղբայրություն ու միասնություն հաստատեցին այն ժամանակ, երբ նրանց սպառնում էր միևնույն թշնամին ու միևնույն դժբախտությունը»:[2]

Արաբ ժողովրդի օգնությունը, հոգատար ու կարեկից վերաբերմունքն ակնհայտ էր ցեղասպանության հենց սկզբից, երբ հայ տարագիրները՝ հոգնատանջ և հուսահատ, հասան Միջագետքի անապատները, ուր «նրանց անխուսափելի մահն էր սպասում» ու «մարդկային ուրվականների նման քայլում էին Միջագետքի անապատներով»:[3] Արաբ ժողովրդի բարեկամական վերաբերմունքն ավելի հաստատուն դարձավ և նրանց օգնությունն ավելի պաշտոնական բնույթ

ստացավ Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիի 1916թ. հունիսի 26-ի և 1917թ. մարտի հայտնի ուղերձներից հետո: Նրա ուղերձներն արմատապես այն գաղափարը հաստատեցին, որ Բարձրագույն Դռան հետ փոխզիջման գնալն արդեն անհնար է և միայն զինված պայքարի միջոցով է հնարավոր հասնել անկախության: Հայերի հետ պատահածը մնաց արաբների հիշողության մեջ, որի վրա հենվելով արաբ հասարակական գործիչները զգուշացնում էին արաբներին՝ խուսափել նույն ճակատագիրն ունենալուց:

Հայերի ճակատագրի նկատմամբ թուրքական իշխանությունների վերաբերմունքը չէր կարող անտարբեր թողնել արաբ հասարակական ու քաղաքական գործիչներին: Մասնավորապես՝ խոսքը Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիի մասին է, որն արաբական աշխարհում առաջնային դերակատարություն ունեցավ իր հայանպաստ քաղաքականությամբ: Նա Բնի Հաշիմ ցեղից էր, որն էլ Մուհամմադ մարգարեի անմիջական հետնորդն էր Ալիի և Ֆաթիմայի ավագ որդի Հասանի միջոցով: Արաբական աշխարհում հոգևոր հարգանք վայելող առաջնորդը, Աբդուլ Համիդ II-ի հրամանով, իր չորս որդիների հետ միասին, ստիպված էր բնակվել Պոլսում, այն պարզ պատճառով, որ սուլթանը չէր վստահում Հուսեյնին, որը, ըստ սուլթանի, «ծայրահեղ ու անհաշտ ազգայնամոլ էր»: Թերևս վախենալով մարգարեի հետ ազգակցական կապ ունեցող այդ մարդուն որևէ վնաս պատճառել՝ Աբդուլ Համիդ II-ը նրան պահում էր սեփական արքունիքում:

Երիտթուրքերն այլ կարծիքի էին: Մեծապես տպավորվելով Հուսեյնի արժանապատիվ ու ազնվական պահվածքից՝ նրանք կարծեցին, որ շերիֆը կարող է ավելի օգտակար լինել իրենց շարժմանը, եթե Հիջազում՝ արաբական այդ կարևոր նահանգում, կարևոր դիրքեր գրաված լինի: Սակայն շուտով երիտթուրքերը հասկացան Հուսեյնին Մեքքա ուղարկելու իրենց սխալը: Արաբները հայերի նման խանդավառությամբ ընդունեցին հեղափոխությունը և վառ հույսեր էին փայփայում: Շուտով նրանք հասկացան, որ Թուրքիայի նոր կառավարիչների բոլոր հանդիսավոր խոստումները լոկ պատրանք են, ուստի երես թեքեցին նոր վարչակարգից, և իրենց կրոնակիցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը փոխարինվեց դժգոհությամբ ու ատելությամբ: Մեքքայի շերիֆին իր ուղերձում բազմիցս հիշատակում է. «Նրանց կառավարությանը մթություն է պատել», «ոչնչացնելով անմեղ ժողովրդին՝ նրանք չեն վախենում պատժից» կամ «նման վարչակարգն իսլամական հասարակության մեջ չի ունեցել իր նախադեպը»:[4]

Անգլիացի միսիոներ Ժ. Պարֆիտը, որը քսան տարի շարունակ ապրել է արաբական երկրներում, իր ճանապարհորդական նոթերում հիշատակում է, որ «արաբական ցեղերի մեծ մասն ատում է թուրքերին» և որ «թուրքերի հեղինակությունը գնալով ընկնում է»:[5]

1908թ. Հուսեյնը Կ. Պոլսից գալիս է Ջիդդա: Չնայած տարաձայնություններին տեղի թուրք և, մասամբ, արաբ կառավարիչների հետ, նա կարողացավ կարճ ժամանակահատվածում վերականգնել իր իշխանությունը Մեքքայից դուրս արաբական գրեթե բոլոր ցեղերի վրա: Եվ երբ երիտթուրքերը որոշեցին հիշեցնել, որ Հիջազը գտնվում է իրենց իշխանության տակ, Հուսեյնն ընդվզեց և սպառնաց արաբական ցեղերին հանել երիտթուրքերի դեմ: Արդեն 1914թ. սկզբներին նա ստացել էր արաբական ցեղերի աջակ-

ցությունը, ձեռք էր բերել համապատասխան հոգևոր իշխանություն, և գնալով ապստամբության գաղափարը հասունանում էր: «Ապստամբության նպատակը ոչ թե մի տիրապետության փոխարինումն է մյուսով, այլ արաբական երկրների ազատագրումը, արաբ կառավարության ստեղծումը, որը կվերականգնի մեր նախնիների փառքը»:[6]

Հուսեյն թագավորը համաձայնվեց արաբական երկրների անկախության ձեռքբերման ու արաբական խալիֆության վերստեղծման պայմանով համագործակցել անգլիացիների հետ՝ Օսմանյան կայսրության դեմ նրանց մղած պայքարում: Հավատալով բրիտանացիների խոստումներին, չստանալով որևէ փաստաթուղթ՝ Հուսեյնը 1916թ. հունիսի 5-ին զինված ապստամբության կոչ արեց, իսկ 1916թ. հունիսի 27-ին պաշտոնապես արաբական տարածքներն անկախ հռչակեց: «Քարեգութ ու գթասիրտ Աստծո անունով հայտարարում ենք, որ նպ.է մեզ առիթ շնորհել ապստամբելու, իր իշխանությամբ ու հզորությամբ օգնել անկախություն ձեռք բերել, և նրա ջանքերը պսակվեցին կատարյալ հաղթանակով: Մենք այն խոր համոզմանն ենք, որ Աստված անհրաժեշտություն համարեց նպատակադրված վրեժ առնել նրանցից և այդ գործը նա մեզ պատիվ համարեց, և մենք կկատարենք այն»:[7]

Նույն օրն էլ Մեքքայի շերիֆը ուղերձով դիմում է ողջ մուսուլմաններին: Խոսելով թուրքական կառավարության վայրագ քաղաքականության մասին՝ նա անդրադառնում է հայ ժողովրդին, որն անօգնական է մնացել Միջագետքի անապատներում: Մասնավորապես, նշելով, որ թուրքական իշխանությունը իրականացրեց հայերի կոտորածները՝ կենդանի թողնելով նրանց մեկ տասներորդ մասը, նա բերում է Մարգարեի խոսքը. «Ով ցավ պատճառի մուսուլմանների հովանավորության տակ գտնվող զիմմիներին, ես նրա հակառակորդը կդառնամ ու կհակառակվեմ նրան Հեղ դատաստանի օրը»:[8] Շարունակելով՝ նա ասում է. «Մենք կարող ենք լսել նրանց արդարացումները.., բայց ինչպե՞ս ներենք նրանց, ովքեր նպատակադրված վտարեցին ժողովրդին սեփական բնակավայրից, հեռացրեցին տղամարդկանց իրենց զավակներից ու կանանցից, քշեցին Անատոլիայի խորքերը, և ու այս ամենն առանց օրինական որևէ պատճառի: Պատվազրկեցին կանանց, որոնք քաղաքականությանը տեղյակ չէին, նրանք տեսան իրենց զավակների մահը՝ իրենց իսկ ձեռքերում, երկար ու տանջալի ճանապարհին, քանի որ չկար սնունդ, ցրտից ու ջերմությունից պաշտպանվելու միջոցներ: ...Երիտթուրքերի նպատակը նրանց ոչնչացումը կամ թրքացնելն էր»:[9] Նա կոչ է անում մուսուլմանական աշխարհին բարյացակամ ու հոգատար լինել հայ ազգի նկատմամբ, հաստատակամորեն պահանջում է արաբական տեղական իշխանավորներից իրենց նահանգներում հայտնված հայ տարագրյալներին պաշտպանել, հովանավորել և ամեն տեսակ մարդկային օգնություն ցույց տալ: Հիջազի կառավարիչը վկայակոչում է Ղուրանը, ուր ասվում է, որ յուրաքանչյուրն իր արած բարիքի չափով կգնահատվի Հեղ դատաստանի օրը: Այդ օրը երիտթուրքերը պատասխան կտան մուսուլմանների ու զիմմիների սպանությունների համար՝ առանց կողմնակի դատի ու դատավորների: Նրանք Աստծուց կստանան իրենց դատավճիռը:[10]

Հիջազի կառավարիչը հայտարարում է, որ ինքը թուրքերի դեմ պատերազմ է հայտարարել ոչ միայն արաբների, այլև թուրքական տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների համար: Մի փաստ անհերքելի

է, որ արաբների կողմից հայերին պաշտպանելու պատճառներից մեկն այն էր, որ արաբները, ի դեմս հայերի, դաշնակից էին տեսնում ընդհանուր թշնամու՝ թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում: Մի ուրիշ առիթով շերիֆ Հուսեյնն ասել է. «Օգնություն հասցնելով ճնշվածներին՝ մենք պարզապես մեր կրոնի՝ արաբների հավատքի հիմնական պատվիրաններից մեկն ենք կատարում: Վստահությամբ ու հպարտությամբ ենք հայտարարում, որ հայ ժողովուրդը և նույն վիճակի մեջ գտնվող մյուս ժողովուրդները նույնպես մեր դաշնակիցներն են, ինչպես լավ, այնպես էլ վատ օրերի համար»:[11]

Հուսեյն թագավորը զգուշացնում է իր հպատակներին, որ թուրքական կառավարությունը հայերի նկատմամբ իրենց քաղաքականությունը կիրառելուց հետո կանցնի արաբներին. «Նրանց ատելությունը մեզ է հասել»:[12] Ի՞նչ կարելի էր սպասել մի կառավարությունից, որին կրոնն ու շարիաթի օրենքները հետ չպահեցին դաժան հաշվեհարդար տեսնել Սիրիայի և Լիբանանի ազգային գործիչների հետ 1915թ. մայիսի 6-ին: «Անխիղճ մարդիկ անգամ չէին կարող թույլ տալ կործանել այսքան կյանք մի հարվածով, եթե անգամ նրանք անապատի գազաններ լինեին»:[13] Լցվել էր արաբների համբերության բաժակը: Միակ հարստությունը, որ մնացել էր երբեմնի խալիֆայությունից, իրենց կրոնն էր: Միայն վերջինիս սկզբունքներով առաջնորդվելով՝ միասնականությամբ նրանք կարող էին անկախության հասնել: Ահա սա էլ դարձավ Մեքքայի շերիֆի ուղերձի գաղափարական առանցքը, որով նա դիմեց իր մահմեդական եղբայրներին: Չնայած մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Հուսեյնը «այնքան էլ շահագրգռված չէր արաբական միասնականության հարցերով: Նա այդ որոշումն ընդունեց այն ժամանակ, երբ նրա որդին Ֆեյսալը, 1915թ. Դամասկոս այցելեց՝ տեղի ազգայնական ուժերի հետ հանդիպելու»:[14] Այնուամենայնիվ, այս փաստը որևէ կերպ չի խանգարում ըստ արժանվույն գնահատել այն հայանպաստ գործը, որը կատարեց Հուսեյն թագավորը: Նա չզլացավ մարդասիրական մոտեցում ցուցաբերել հայ ազգի տարագրյալ զավակներին, չանտեսեց նրանց ազգային արժանիքները, քանի որ նրա մոտ «մարդկային գործոնը բարձր էր կանգնած ցանկացած ազդեցությունից»:[15]

Հետագայում՝ 1917թ. (18 ռաջաբ, 1336), Հուսեյնի մի այլ պատգամ են ստանում էմիր Ֆեյսալն ու էմիր Աբդ ալ Ազիզ ալ Ջարբան: «...Առաջնորդվել իսլամի պատվիրաններով և նրա օրենքներով, պաշտպանել նրանց այնպես, ինչպես պաշտպանում եք ձեր որդիներին, ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մուսուլմանների հովանավորության տակ են գտնվում (զիմմի են համարվում)»:[16]

Հուսեյն թագավորի ուղերձները լայն արձագանք են գտել արաբական աշխարհում: Տեղի կառավարիչները, աշիրաթների առաջնորդները, ստանալով Հուսեյնի ուղերձը, չհապաղեցին օգնության ձեռք մեկնել հայերին. «Թուրքերը հալածել են հայ ազգի շատ զավակների, ջարդել են ում պատահի. շատերը փախել են անապատներում բնակվող բեդվինների մոտ: Վերջիններս նրանց ազատել են թուրքերի ճիրաններից ու ապաստան տվել», - գրում էր արաբական «Ալ Ասիմա» օրաթերթը:

Հետաքրքրական է Սիրիայի հյուսիսային շրջանի աշիրաթների ցեղապետերի դիրքորոշումը տարագրյալ հայերի նկատմամբ: 1917թ. Հուսեյն թագավորի ուղերձը ստացել էին նաև ալ Ջարբա ցեղի առաջնորդները:

Նրանց հրահանգվել էր օգնել թշվառ և թափառական հայերին: Նրանց առաջնորդն այդ ժամանակ եղել է Դահհամ ալ Հադին: Նրա որդին՝ Համիդ ալ Ջարբան, որը ներկայումս վարում է ցեղապետի պաշտոնը, լավատեղյակ լինելով տեղի ունեցած դեպքերին՝ ասում է. «Հայրս նեղացել էր, որ Հուսեյն թագավորը նամակ է ուղարկել հայերին օգնելու համար: Մենք գիտենք մեր պարտականությունները, այնպես որ մեզ հանձնարարելու կարիք չկար, քանի որ հայերը մեր եղբայրներն են: Նա, ով հարձակվեր հայերի վրա, մեր դատաստանից չէր կարող փախչել, ով ուզում էր լիներ՝ արաբ, քուրդ»:[17] Նա նշում էր, որ ջարդերի ժամանակ Սիրիայի հյուսիսային շրջանում բոլոր աշիրաթներն օգնում էին հայերին, ինչով կարողանում էին: Այդ աշիրաթների օգնության մասին. «Քանի որ մենք մոտ էինք սահմանին և հզոր իշխանություն ունեինք, այն հայերը, որոնք մեր սահմանում հայտնվեցին, փրկվեցին անխուսափելի մահից: Հայերի մեծ մասը գալիս էր Մերդինից: Գալիս էին մեծ բազմությամբ, տված և վախեցած: Հայրս նրանց բաժանում էր ընտանիքների մեջ, որոնց տրվում էր ապահով բնակավայր և ապրուստ»:[18]

Հայերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերել Ռաքքայի աշիրաթի առաջնորդ շեյխ Ֆեղի ալ Ֆուազը, որն այդ տարիներին եղել է Ռաքքայի պետական պաշտոնյա «աքսորի հսկիչ»: Նրա որդին՝ Մուհամմադ Ամին Ֆուազը, հոր մասին պատմում է. «Նա նահանգի մեծամեծներից էր, շատ հողեր ուներ, տարբեր պետական պաշտոններ: Հակառակ թուրքերի տված հրամանների, նա իր վրա վերցրեց ոչնչացումից փախած հայերին պաշտպանելու պարտականությունը: Նրանց հավաքում էր իր ընդարձակ տան մեջ, և ոչ ոք չէր կարող նույնիսկ մոտենալ նրանց: Նրա մոտ են մեծացել 50 որբեր»:[19]

Այսպիսով, Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում, նաև Ռաքքայում ապրող արաբական ցեղերը, նրանց արաջնորդները, որոնք վայելում էին տվյալ շրջանի կամ գյուղի հարգանքը, պետական դիրքերից և ապահով նյութական կարողությունից ելնելով, կարողացել են հայերին փրկել կոտորածներից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ աշիրաթների ցեղապետերն այնքան ազդեցիկ են եղել, այնքան հեղինակավոր, որ անգամ թուրք զինվորները չեն համարձակվել մոտենալ նրանց մոտ ապաստանած հայերին: Եվ այս ամենը նրանք անում էին և՛ հանուն մարդասիրության, և՛ ընդհանուր թշնամուն դիմագրավելու համար:

Հուսեյն թագավորի ուղերձների պատգամները՝ հայերին պաշտպանելու վերաբերյալ, սկսեց իրականացնել նրա որդի Ֆեյսալը, որը 1918թ. սեպտեմբերի 30-ին մտավ Դամասկոս և Դամասկոսի վրա ծածանեց արաբական եռագույն դրոշը: 1918թ. հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմեց առաջին անկախ կառավարությունը, որի ղեկավար նշանակվեց Ալի Ռիզա առ Ռիկաբին: Ֆեյսալը հայերին աջակցելը դարձնում է իր քաղաքականության կարևոր կետերից մեկը և իր առաջին պաշտոնական հայտարարությունում, որն ուղղված էր Սիրիայի մեծամեծներին, կանգ է առնում երկրի կառավարման ձևերի վրա. «Ես կարծում եմ, որ ավելի շատ ուշադրություն է դարձվելու փոքրամասնությունների իրավունքներին, որպեսզի սրանով վերացվի ատելությունը և կրոնական թշնամանքը, որ ստեղծել էին թուրքերը, և դրա փոխարեն ցանել սիրո և եղբայրություն սերմեր տարբեր կրոնի պատկանող մարդկանց միջև»:[20]

Հիշարժան է, որ ի պատասխան Ֆեյսալի այդ նույն հավաքում ելույթ է ունենում նաև ներկա գտնվող՝ Սիրիայի հայոց հոգևոր առաջնորդը: Նա շնորհակալություն է հայտնում արաբներին չորս տարվա ընթացքում հայ գաղթականների հանդեպ նրանց վերաբերմունքի համար և ավելացնում, որ պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով:

Անձամբ Ֆեյսալը, որը ձգտում էր, ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև արևմուտքի շահախնդիր հետաքրքրությանը ենթակա ազգային փոքրամասնություններին սիրաշահել, չէր մոռանում, որ հայրը պատվիրել էր հաշվի նստել արաբական երկրամասերում հայերի ոչ միայն «գաղթականության» փաստի, այլ մանավանդ «բնակության» հեռանկարի հետ: Ֆեյսալը գիտակցում էր, որ ֆրանսիական գաղութարարները հույսեր էին կապում «հայկական հենարանի» հետ: Բնական է՝ նա աշխատում էր արաբների սպասվող դժվարին փորձությունների պահին հայ գաղթականությանը և քրիստոնյա մյուս համայնքներն իր կողքին կամ, առնվազն, ոչ ֆրանսիացիների կողքին ունենալ:

Արաբական թերակղզում թուրքական զորամասերը դուրս շպրտելուց հետո Ֆեյսալ իբն Հուսեյնի գլխավորությամբ դեպի հյուսիս շարժվող ապստամբները սրբությամբ էին կատարում իրենց վեհապետի հրահանգը և հնարավորին ամեն ինչ անում էին հայկական խլյակներին մահվան ճիրաններից փրկելու համար:

«Մեր դաշնակից Հիջազի քաջարի զինվորները, - վկայում է Հայ Ազգային պատվիրակության նախաձեռնությամբ և հայասեր ֆրանսիացիների օգնությամբ Փարիզում լույս ընծայվող «Լա վուա դը լ'Արմենի («Հայաստանի ձայն») երկշաբաթաթերթը, - Հարավային Սիրիայում և Պաղեստինում իրենց հաղթական առաջխաղացման ժամանակ ազատագրել են տեղահանված բազմահարյուր դժբախտ հայերի և արտակարգ հոգատարությամբ նրանց խնամելուց հետո ուղարկել Եգիպտոս»:

Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ որբահավաքի ընթացքը, եթե չլիներ Հիջազի շերիֆ Հուսեյն իբն Ալիի և նրա որդի Ֆեյսալի մարդասիրական աջակցությունն այդ գործին: 1918թ. վերջերին Հիջազի գահակալը, ընդառաջելով Պողոս Նուբար փաշայի դիմումին, օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդի դժբախտացած զավակներին՝ տեղական իշխանություններին կարգադրվեց հանձնել «մեծ ու փոքր, ամուսնացած ու ամուրի աղջիկներին ու մանչերին»: Բացի այդ Ֆեյսալը կարգադրեց ալ Ռիկաբիին պարզել, թե «որ արաբների մոտ ու աշիրաթներում հայ կանայք, աղջիկներ կամ որբեր կան, որպեսզի այդ հայերը վերցվեն արաբների մոտից ու հանձնվեն հայերի կազմած ազգային ներկայացուցչական մարմիններին»:[21]

Այսուհանդերձ՝ անաչառության համար հարկ է նշել, որ որոշ արաբներ չեն կատարել իրենց հոգևոր վեհապետի հրահանգը, նրանք ոչ միայն չեն օգնել հայերին, այլ խանգարել են տեղական մարմիններին՝ օգնելու հայերին: Հալեպի զինվորական կառավարիչ Շուքրի ալ Այուբին այդ կապակցությամբ ցավով է նշում. «Հայտնի է, որ տարագրության շրջանին գտնվեցան նաև արաբ անհատներ, որոնք իրենց պաշտոնի բերումով կամ տգիտության, շահի կամ ուրիշ շարժառիթներով վնաս հասցուցին հայ անհատներուն: Սակայն վստահ եղեք, որ արաբ ազգն անկեղծորեն բարեկամ եղավ և պիտի ըլլա ձեր դժբախտ ազգին»:[22]

Ընդհանրացնենք. Մեքքայի շերիֆի ուղերձները կարևոր փաստաթուղթ են Հայոց ցեղասպանության պատմության համար, որոնք փաստում

են արաբ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի ողբերգության նկատմամբ: Ուղերձների մանրամասները՝ երիտթուրքական կառավարության կողմից իրականացված քաղաքականության մասին, որոնք շերիֆն անվանել է «դաժանության մարմնացում», կարող են իրենց նպաստը բերել մարդկության դեմ ուղղված այս հանցագործության միջազգային մակարդակով ճանաչման գործին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Վարդան Լ. Ցեղասպանության ծրագրումը և նախապատրաստությունը. Հուշամատյան մեծ եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 174:
[2] Սալեհ Զահր ադ Դին. Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը, Բեյրութ, 2000, էջ 113 (արաբերեն):
[3] Մուհամմադ Ռաֆաաթ. Հայկական հարցը Օսմանյան պետությունում 1878-1993թթ., Կահիրե, 2002, էջ 66 (արաբերեն):
[4] Արաբական աղբյուրները Հայոց ցեղասպանության վերաբերյալ, Բեյրութ, 1988, էջ 11-12, 18 (արաբերեն):
[5] Մարտիրոսյան Հ. Երիտասարդ թուրքերի ազգային քաղաքականությունը արաբական աշխարհում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, տե՛ս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1967, հ. 3, էջ 152:
[6] Саид Амин. Восстание арабов в XXв., Москва, 1964, стр. 61.
[7] Արաբական աղբյուրները ..., էջ 25:
[8] Նույն տեղում, էջ 14:
[9] Նույն տեղում, էջ 16:
[10] Նույն տեղում, էջ 12:
[11] Նաջարյան Ե. Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում, տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. 6, Երևան, 1974, էջ 133:
[12] Արաբական աղբյուրները ..., էջ 17:
[13] Նույն տեղում, էջ 16:
[14] Тума Эмил. Национально-освободительное движение и проблема арабского единства, Москва, 1977, стр.118.
[15] Սալեհ Զահր ադ Դին, նշվ. աշխ., էջ 255:
[16] Արարատ. Բացառիկ. Մեծ եղեռնի 80-ամյակի կապակցությամբ, Բեյրութ, 1995, էջ 232 (արաբերեն):
[17] Արիսյան Ն. Հայերի սարսափները սիրիական մտքում, Դամասկոս, 2002, էջ 33 (արաբերեն):
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում, էջ 34:
[20] Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, (կազմողներ Հ. Սարգսյան, Ա. Թոփալյան), տե՛ս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1974, հ. 6, էջ 230:
[21] «Ժողովուրդի ձայն», Փարիզ, 22.01.1919:
[22] «Եփրատ», Հալեպ, 21.05.1930:

Հավելված 1

Հեղափոխության առաջին ուղերձը
26 հունիս, 1916 թ.

Բարեգութ և գթասիրտ Աստծո անունով

Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիի համընդհանուր հայտարարությունը՝ ուղղված բոլոր մուսուլմաններին

Տե՛ր, բացի՛ր մեր սրտերը մեր և մեր ժողովրդի առջև, քանզի միայն դու կարող ես դա անել:

Ձեզնից յուրաքանչյուրը տեղյակ է Մեքքայի պատմությանը: Մեքքայի էմիրներն առաջինն էին, որ ճանաչեցին ու ընդունեցին Բարձրագույն իշխանությունը: Հիմա երիտթուրքերը ցանկանում են մեր Հավերժության տունն իրենց սեփականությունը դարձնել... Նրանք պետք է իրենց պետությունը կառուցեին շարիաթի հիման վրա, այնինչ շեղվեցին օրինական ուղուց: Նախատիք ու անարգանք նրանց, ովքեր կհեռանան օրինական ճշմարտությունից ու օրենքներից... Ձծալե՛նք ձեռքներս, լուսավոր ճանապարհ հարթե՛նք մեզ համար: Եվրոպական այս պատերազմի հաջողությունները շատ փոփոխական են: Մատա՞ կանգնենք մեր պետությանը վտանգի պահին, անհապաղ միջոցառումներ ձեռնարկենք՝ ազատվելու երիտթուրքերի դաժան պատիժներից: Մենք չենք վերցնի երիտթուրքերից իրենց անաստվածության ու կեղծ հավատի սկզբունքները, բայց մեր գործողությունները կսկսենք նրանց խոսքերից, որոնք տպագրվել են սուլթանական տան գրքերում ու թերթերում, որոնք բացահայտ նվաստացնում են մեր կրոնը, Մարգարեին, արդարադատ խալիֆներին ու սրբազան Սունան: Չի՛ կարելի տարածել այդ տպագրվածներից օրինակներ... Ղուրանում ասվում է, որ յուրաքանչյուրն իր արած բարիքի չափով կգնահատվի Ահեղ դատաստանի օրը: Այդ օրը նրանք պատասխան կտան մուսուլմանների ու զիմմիների սպանությունների համար՝ առանց կողմնակի դատի ու դատավորների: Նրանք Աստծուց բանավոր կստանան իրենց դատավճիռը:

Նրանք թալանեցին նրանց ունեցածքը, վտարեցին իրենց տներից: Չափ չկա նրանց կատարած ոճրագործություններին: Նրանց կատարածներն իպամում չունեն իրենց նախադեպը:

...Թուրքական իշխանությունը պատերազմի ժամանակ տարածքային կորուստներ ունեցավ. նա կորցնեց Բոսնիան, Հերցոգովինան, Մակեդոնիան, Ալբանիան, Տրիպոլին, Կիրենաիկան... Այն ժամանակ թուրքական իշխանությունն իրականացրեց հայերի ոչնչացումը՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, կենդանի թողելով նրանց մեկ տասներորդ մասը: Աստծո Մարգարեն ասում է. «Ով ցավ պատճառի մուսուլմանների հովանավորության տակ գտնվող զիմմիներին, ես նրա հակառակորդը կդառնամ և կհակառակվեմ նրան Ահեղ դատաստանի օրը»:

...Ինչ վերաբերվում է արաբներին և արաբերեն լեզվին, ապա «Իթթիհադ վե թերաքին» հանցանք գործեց մեր պետության և կրոնի նկատմամբ: Նրանք փորձեցին փակել մեր դպրոցները, գրասենյակները: Նրանք

նույնիսկ չվախեցան արաբերեն լեզվի կորստից, որը կնշանակեր նաև մահմեդականության վերջը, քանի որ արաբերենով է ներշնչվել Սուրբ Գիրքը և նրանով է հավերժացել՝ շնորհիվ իր կատարելության: Սակայն դա չի նշանակում, որ այն միայն արաբների կրոնն է, այլ ընդհանուր է բոլորի համար: Եվ Աստված «Ամպրոպը» սուրայի մեջ ասել է. «Մենք իմաստությունը արաբերենով ենք ներշնչում»:

Երկրում տիրող արտակարգ իրավիճակը թույլ տվեց թուրքերին անել այն, ինչ ցանկանում էին: Նրանք նպատակադրված թալանեցին բնակչությանը, շատերին կախաղան բարձրացրեցին կամ այլ կերպ սպանեցին, մյուսներին էլ աքսոր քշեցին: Միանգամից կախաղան բարձրացվեցին քսանմեկ զարգացած ու հարգված մուսուլմաններ և արաբներ, նրանց հետ մեկտեղ, ովքեր սպանվել էին մինչ այդ՝ Էմիր Օմար ալ Ջազաիրի, Էմիր Արիֆ ալ Շիհաբ, Շաֆիկ բեյ ալ Մուայյադ, Շուքրի բեյ ալ Ասլի, Աբդ ալ Վահաբ, Թաուֆիկ բեյ ալ Բասեթ, Աբդ ալ Համիդ ալ Զահրաուի, Աբդ ալ Ղանի ալ Արիսի և նրանց ընկերներ, որոնք շատ հայտնի էին:

...Անխիղճ մարդիկ անգամ չէին կարող հեշտությամբ իրենց թույլատրել կործանելու այսքան կյանք մեկ հարվածով, եթե անգամ նրանք անապատի գազաններ լինեին: Նրանք բացահայտ սպանում էին մարդկանց փողոցներում, բայց չէ՞ որ մեր քաղավորությունում կան օրինական իրավունքներ ու կանոններ, և մենք պետք է դրանց հետամուտ լինենք: Բայց նրանք սպանում էին ռազմական պատճառներով կամ դավադրաբար՝ բանտերում և փողոցներում... Մենք կարող ենք լսել նրանց արդարացումները և ներում շնորհել նրանց՝ այդ արժանավոր մարդկանց սպանության համար, բայց ինչպե՞ս ներենք նրանց, ովքեր նպատակադրված վտարեցին ժողովրդին սեփական բնակավայրից, հեռացրին տղամարդկանց իրենց զավակներից ու կանանցից, քշեցին նրանց Անատոլիայի խորքերը և այս ամենն առանց օրինական որևէ պատճառի: Պատվազրկեցին կանանց, որոնք քաղաքականությանը տեղյակ չէին, նրանք տեսան իրենց զավակների մահը՝ իրենց իսկ ձեռքերում, երկար ու տանջալի ճանապարհին, քանի որ չկար սննունդ, ցրտից ու ջերմությունից պատսպարվելու միջոցներ: Տերն ասում է. «Մեղք մի՛ գործիր, այլ ցավի՛ր նրանց համար»: Երիտթուրքերի նպատակը նրանց ոչնչացումը կամ թրքացնելն էր: Նրանք դաժանորեն սպանում են, անգթորեն ոչնչացնում և ահա նրանց ատելությունը մեզ էլ է հասել:

Ո՞ր մուսուլմանը կամ մահկանացուն կգոհանա, եթե տեսնի իր ժողովրդին նման դժբախտության ու նվաստացման մեջ: Տերն իր կրոնում թույլ է տվել. «Նրանք,ովքեր սպանում են անարդարներին, Տերը նրանց սատար է կանգնում»: Աստված պահանջում է ոչ մահմեդականների նկատմամբ արդար գործել. «Մի՛ սպանեք նրանց իրենց կրոնի համար, մի՛ վտարեք իրենց տներից և արդար եղեք նրանց նկատմամբ»: Աստված սիրում է ուղիղ ճանապարհով գնացողներին:

Ինչ վերաբերում է Հիջազին, ապա երիտթուրքերը ցանկանում են մեզ հետ այնպես վարվել, ինչպես վարվեցին Սիրիայի և Իրաքի հետ: Բայց նրանց դատը կկայանա Աստծո կամքով մեր իսկ Տան մեջ՝ մեր հայրենիքում: Եվ նրանք կճաշակեն այն դատնությունները, որոնք դրախտային երկիր Սիրիան ճաշակեց. սով, վախ, զրկվեց այն պարգևներից, որ Տերն էր ի վերուստ պարգևել: Սիրիայում երիտթուրքերի զորքերի տեղակայմամբ

ուժեղացվեց ճնշումն այն աստիճան, որ շատ բարձրաստիճան և միջին խավի մարդիկ ստիպված եղան վաճառել իրենց տները, ունեցվածքը՝ սոսկ կյանքն ապահովելու համար: Եվ եթե Աստված այս ամենը մեզ որպես փորձություն է ուղարկել, ուրեմն պետք է այն հպարտությամբ տանենք:

Ո՞վ մուսուլման եղբայրներ.

Վտանգը գնալով ավելի սպառնալի է դառնում: Մենք հայտնվել ենք մի վտանգի մեջ, որն իսլամում իր նախադեպը չի ունեցել: Մեր նախնիները մեզ ուժեղ պետություն են թողել, որը, սակայն, Օսմանյան կայսրությունն էր ժառանգել: Մենք՝ արաբներս, անպաշտպան ենք մնացել, անօգնական ենք թողել արաբերեն լեզուն: Մենք պետք է սատար կանգնենք մեր պետությանը. այդժամ մեր պետությունը ուժեղ կլինի, կկարողանանք պահպանել մեր անկախությունը և կրոնական ավանդույթները:

Եկել է երիտթուրքերի պետության վերջը. հեղափոխության ժամը վրա է հասել: Վերջապես քողը բարձրացվեց և ակնհայտ դարձավ, որ կայսրությունը Էնվեր, Ջեմալ և Թալեաթ փաշաների ձեռքերումն էր, որոնք կառավարում էին այնպես, ինչպես իրենց էր դուր գալիս և վարվում այնպես, ինչպես իրենց կամքն էր թելադրում: Իսլամում չկան նմանօրինակ արարքներ, ինչպիսիք իրականացրին Թալեաթը, Էնվերը և Ջեմալը: Մենք տեսել կամ լսել ենք նրանց ոճրագործությունները, մեկնաբանությունների կարիք չկա... Նրանց պետության մեջ ոտնահարվել են կրոնի սրբությունները, սակայն մենք պահպանել ենք մեր հարգանքը մեր նախնիների, Մարգարեի հանդեպ:

Մենք բավականին ապացույց ունենք այն մասին, թե ինչպես են նրանք վերաբերվում կրոնին ու արաբ ժողովրդին. թեկուզ այն փաստի մեջ, որ նրանք համարձակություն ունեցան ոմբակոծել Հնամյա Տունը՝ Աստվածային Միասնության Տաճարը, որի մասին Աստծու խոսքում ասված է. «Մաքրի՛ր իմ տունը նրանց համար, ովքեր քայլում են նրա մոտով», ոմբակոծեցին նաև մուսուլմանների Կիբլան և Քաաբան: Արձակեցին երկու արկ նրանց վրա իրենց խոշոր թնդանոթներից: Մեկն ընկավ մեկ ու կես յարդ Սև քարից վերև և մյուսը՝ երեք յարդ: Հրկիզվեց Քաաբայի ծածկույթը: Հազարավոր մուսուլմաններ տագնապի ու հուսահատության աղաղակներով ներս խուժեցին մարելու կրակը: Կրակին հասնելու համար նրանք հարկադրված էին բացել շենքի դուռը և մագլցել տանիք: Թշնամին երրորդ արկը արձակեց Մակամ Իբրահիմի վրա: Այդ ամենի հետ մեկտեղ ամեն օր երեք կամ չորս հոգի սպանվում էր շենքում, և, վերջապես, անհնարին դարձավ մուսուլմանների համար Քաաբային մոտենալը: Մենք թողնում ենք ողջ մուսուլմանական աշխարհին՝ Արևելքից Արևմուտք, դատելու Սրբազան Տունը արհամարհելու և սրբապղծելու համար: Բայց մենք թույլ չենք տա, որ մեր կրոնական զգացմունքները խաղալիք դառնան դաշնակիցների ձեռքին... Իսկ լռությունը մեզ հավանական ոչ մի օգուտ չի բերի... Վտանգն անցած կլինի, եթե մենք լիակատար անկախություն ձեռք բերենք. անկախություն՝ իր բուն իմաստով, երբ ազատված կլինենք օտարների իշխանությունից, մաքրված՝ ամեն տեսակի ազդեցությունից: Այդժամ ամեն ինչ ներդաշնակ կլինի մեր կրոնի սկզբունքներին համապատասխան՝ իրական առաջընթացին: Մենք պարտավոր ենք դա անել և ջանք ու եռանդ չենք խնայի տարածելու կրթությունը բոլոր դասակարգերի մեջ անխտիր՝ համաձայն նրանց կարիքներին ու վիճակին:

Մենք համոզված ենք, որ սա մեր կողմից լավագույն ծառայությունն է իսլամին, այլապես չի կատարվի մուսուլմանների ամենանվիրական ցանկությունները: Իսկ երիտթուրքերի համար կգան ճակատագրական օրեր: Սպասե՛նք, քանզի Աստված համբերատարների հետ է և աղոթե՛նք, որ մեզ ուղիղ ճանապարհով տանի ու հավատա՛նք Բարձրյալին: Նա է մեր Արժանավորը և մեր ճակատագրի Բարօրությունը:

Մեքքայի շերիֆ և էմիր՝ Ալ Հուսեյն իբն Ալի

25 Շաաբան, 1334թ.
(27 հունիս, 1916թ.)

Հավելված 2

Հեղափոխության չորրորդ ուղերձը.
Նորին Մեծություն Հաշմիյան թագավորի զեկույցից

Բարեգութ ու գթասիրտ Աստծու անունով.

Աստծո խոստմանը համաձայն ձեզնից նրանք, ովքեր հավատում են ու բարի գործեր կատարում, Աստված նրանց իր հետևորդը կնշանակի, ինչպես դա տեղի ունեցավ նախնիների հետ, երբ ոմանք իրենց վախը փոխարինեցին հանգստությամբ, Աստծուն ծառայեցին ու բազմաստվածություն չհանդուրժեցին:

Փառք Աստծուն՝ Իրավունքի տիրոջը և Աջակցին, չարիքը ոչնչացնողին, իրեն հավատող սրտերին կատարյալ հանգստություն պարգևողին, ուղղուց շեղված թշնամիներին կշտամբողին: Փառք Աստծուն՝ մեր Տիրոջը և Մուհամմադ մարգարեին, որն իր հետ բերեց արևածագը, ոչնչացրեց մթությունը, մոլորությունը: Փառք ու խաղաղություն նրա ցեղին ու զինակիցներին:

...Երախտագիտություն ու փառք Տիրոջը, որից ես իմ նախորդ ուղերձը ստացա: Փառք Բարձրացյալին, որի օգնությամբ իմ կոչը նախասահմանված ուղղով է ընթանում: Դրա շնորհիվ ողջ հասարակությունը և, հատկապես, մուսուլմանները հասկացան, որ մեր վերելքի հիմնական պատճառը մեր գիտելիքն ու ավանդականությունն է: Դրա հետ մեկտեղ մենք տեսանք Բարձրացյալի նախանշանը և հետևում ենք նրա իշխանությանը: Ինչպես ասվում է. «Ալլահը ուղիղ ճանապարհով է տանում նրան, ում ցանկանում է և մոլորեցնում՝ ում կամենա»: Սա մի կողմից, իսկ մյուս կողմից՝ նա ամրապնդում է նրանց հավատը, ովքեր հավատում են և հավատարիմ եմ, ինչպես նաև համոզված են նախորդ ուղերձների հավաստիությանը: Մենք ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ երիտասարդ թուրանականների (իթթիհատականների) մեղսագործություններին, որոնք կատարեցին վերջին շրջանում, սպանություններին՝ նույնիսկ մուսուլմանների նկատմամբ: Դա արդեն բացառում է նրանց օրինական, մաքուր մահմեդական լինելը: Ինչպես նշվեց առաջին ուղերձի 25-րդ տողում, նրանք թալանեցին Մարգարեի բնակատեղին: Նրանք զրկվեցին բոլոր օրհնություններից ու ճիշտ ճանապարհից: Նրանց արարքը դաժանության մարմնացում

է: Ինչպես չասել, որ այն ամենադաժանն էր, քանի որ մեր Տիրոջ՝ Բարձրացյալի պահանջն է հարգանք տածել Սուրբ հողի նկատմամբ: Նա ասել է. «Նա, ով հավատում է, իր ձայնը երբեք չի բարձրացնում Մարգարեի ձայնից»: Ինչպես նաև Ամենակարողն ասել է. «Նրանք, ովքեր անուշադրության են մատնում Աստծո առաքյալի մոտ արձակված ձայները, ուրեմն պետք է հասկանան, որ Աստված նրանց փորձություն է ուղարկել, որ ամրացնի նրանց սրտերը»: Որտե՞ղ է մեր հարգանքի չափը: Ամենակարող Աստվածը մեզանից պահանջել է, որ մենք հարգենք մեր Մարգարեի սրբավայրը, մինչդեռ երիտթուրքերը այդ սուրբ վայրը չարիքով են լցրել: Այս ամենը մենք թողնում ենք մուսուլմանական աշխարհի հայեցողությանը: Նախորդ ուղերձում մենք պատգամել ենք մեր կրոնի օրենքները, միայն կավելացնենք հետևյալը. «Նրանք, ովքեր ցավ են պատճառում Ալլահին, Մուհամմադ մարգարեին, Աստված նրանց անիծում է այն աշխարհում և Հեղ դատաստանի օրը նրանց համար տանջանքներ է նախապատրաստում»: Մեր ցանկությունը և Աստծու այս խոսքերը վկայում են, որ մենք կարիք չունենք վախենալու այս աշխարհի համար: Սակայն մենք պետք է մուսուլմանական աշխարհի ուշադրություն սևեռենք այն փաստի վրա, որ արգելված է Բարձրացյալի վրա ձայն բարձրացնելը: Մուսուլմանական աշխարհը պետք է գիտակցի, որ երիտթուրքերի մեղսագործությունները դատապարտվում են մեր կրոնով: Եվ եթե որևէ մուսուլմանը երկմտի մեր այս հայտարարության իսկության մեջ, պետք է փնտրի վկաներ,որոնք կապացուցեն մեր ասածների իսկությունը: Իսկ դրանք հաստատողը հարյուր հազարավոր տարագրյալներն են ու տեղացիները: Մեզ համար երիտթուրքերի արարքները զարմանալի չեն, նրանց բռնած ճանապարհը միայն չարիք է բերում: Թող Աստված մեզ նման բաներից հեռու պահի:

Մենք այս պատմությունը փոխանցում ենք աշխարհի բոլոր ծայրերում գտնվող մեր մուսուլման եղբայրներին, որ նրանք էլ տեղյակ լինեն այս խառնաշփոթին, որը մեզ նվաստության ու անարգանքով է պատել առջևից ու հետևից, վերևից ու ներքևից: Սակայն մենք այն խոր համոզմանն ենք, որ Աստված անհրաժեշտություն համարեց նպատակադրված վրեժ առնել նրանցից և այդ գործը նա մեզ պատիվ համարեց: Մենք կլուծենք մեր վրեժը, կքափենք նրանց արյունը:

...Պետք է հստակ գիտակցել, որ ամեն ոք Հավերժական կյանքի է արժանանալու ըստ իր կատարած արարքների: Այսուհետ մենք պետք է համարձակություն ունենանք պայքարել այն ամենի համար, ինչի մասին հակիրճ ասվել է նաև նախորդ ուղերձներում: Մենք արդեն տեսանք, որ երիտթուրքերն ոտնահարում են մեր իսլամական զգացմունքները: Մենք պետք է համարձակություն ունենանք դեմ դուրս գալու նրանց կատարած մեծագույն մեղսագործության, վայրագ ոճրի դեմ: Թող մուսուլմանական աշխարհը զգուշանա նրանց խարդավանքներից:

Մուսուլմաններից նրանք, ովքեր դեռևս մնացել են թուրքական իշխանություններում և չեն նպաստում թուրքական իշխանության անկմանը, նրանք նույնպես իթթիհադական են:Մենք մեր հույսը վերջնականապես կկտրենք նրանցից: Դրանից հետո մեր անմեղությունը բացահայտ կլինի: Աստված երկար կյանք կպարգևի նրան, ով իր հայրենիքը կազատի երիտթուրքերից:

Աստված է վկա. Նրանն է եղել իշխանությունը սրանից առաջ և կլինի այսուհետ:

ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ

10 Ջումադա ալ առաալ, 1335թ.
(Մարտ 1917թ.)

Резюме

Позиция арабского мира в вопросе об армянском геноциде и манифесты шерифа и эмира Мекки ал Хусейна ибн Али.

Нарине Маргарян

Арабы Междуречья стали свидетелями депортации армян, их изгнания со своей исторической родины. Спасшиеся от резни армяне нашли приют и увежище у местных арабов. Их гуманное отношение, предоставление армянам всесторонней помощи приняли официальный характер после принятия шерифом и эмиром Мекки ал Хусейном ибн Али манифестов от 26 июля 1916г. и марта 1917г.

Шериф и эмир Мекки обращается ко всему мусульманскому миру, призывая всех духовных предводителей и местных аравских правителей "во имя Корана" защитить и поддержать армян. Шериф и эмир Мекки и его сын Фейсал предоставили армянским сиротам увежище, а женщин вернули их родственникам.

Провармянская политика шерифа Мекки сыграла неоценимую роль в улучшении положения депортированных.

Манифесты шерифа, которые предоставлены в приложении в переводе на армянский, являются важными документами в историографии армянского геноцида.

Summary

The Attitude of the Arab World Towards the Issue of the Armenian Genocide and the Manifests of the Sheriff and Emir al Hussein ibn Ali.

Narine Margaryan

The Arab population living within the confines of the Ottoman Empire not only witnessed the annihilation of a whole people but also extended a saving hand to the victims of the Turkish genocidal policy.

Escaping the massacre, many of the Armenian victims were able to find asylum and shelter among the local Arabs. The humanistic attitude and assistance of the latter took on an official character after the proclamation of manifests by the Sheriff and Emir of Mecca al Hussein ibn Ali on July 26, 1916 and in March 1917.

The Sheriff of Mecca called upon the whole Mohammedan world – including all spiritual leaders and local Arab governors – to protect and assist the Armenians "in the name of the Koran".

The Sheriff of Mecca and his son Feisal granted asylum to the Armenian orphans and helped the whomen return to their relatives. The Pro-Armenian attitude of the Sheriff played a significant historical role in the salvation of the remnants of the Armenians from the slaughter.

The manifests that are preseted in the appendix in Armenian translation are important documents for the historiography of the Armenian Genocide.